

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ի Ր


Հ Ա Յ Ե Ր Ի Տ . Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

Զ Ա Կ Ա Չ Ի Կ Ի

---


(ՀԻՄՆԵԱԼ՝ 1917 ՄԱՐՏ 1, Ի ԶԱԿԱԶԻԿ)

(ՎԱԻԵՐԱՅԵԱԼ 1917 ՄԱՐՏ 1-Ի ԱՆԴՐԱՆԻԿ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՑ ԿՈՂՄԷ)



ՏՊԱԳՐ. Զ. ՊԵՐՊԵՐԵԱՆ





Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ի Ր

Հ Ա Յ Ե Ր Ի Տ . Մ Ի Ո Ւ Թ Ե Ա

Զ Ա Կ Ա Զ Ի Կ Ի

(ՀԻՄՆԵԱԿ՝ 1917 ՄԱՐՏ 1, Ի ԶԱԿԱԶԻԿ)

(ՎԱԻԵՐԱՅԵԱԿ 1917 ՄԱՐՏ 1-Ի ԱՆԴՐԱՆԻԿ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ ԿՈՂՄԷ)

Ն Պ Ա Տ Ա Կ

ՅՕԴ. 1.— Հայ Երիտ . Միութիւնը որ կազմուած է Զա- կազիզի մէջ 1917 Մարտ 1ին, իրեն նպատակ ունի Զակա- զիզի Հայ համայնքին մէջ ազգային ոգին և կեանքը վառ պահել, հիմնելով յատուկ ժողովրդ . Հսարան-Ընթերցարան մը Զակազիզի մէջ, և կազմակերպել հանդէսներ, բարոյա- ցուցիչ հրապարակախօսութիւններ և դասախօսութիւններ Հայ և օտար լիզուներէ՝ տարրական գիտելիքներու վրայ :

Կ Ա Զ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՅՕԴ. 2.— Այն ամէն Հայ, որ Զակազիզ կամ Շարքիչի շրջանակին մէջ բնակութիւն հաստատած է, և որ լրացուցած է տասնըութը տարիքը, կրնայ անդամակցիլ Միութեանս, վճարելով առ նուազն (10) տասը Ղ . Ո . մտից տուրք և առ նուազն ամիսը մէկ անդամովճար, որ է (5) հինգ Ղ . մտից տուրք : Կարող է ընդմիջել իր անդամակցութիւնը :

ՅՕԳ. 3.— Մէկէ աւելի անդամավճարումը չստ կամս է ,  
առանց ձայնի ու է առաւելութեան անդամին :

ՅՕԳ. 4.— «Պատուոյ անդամ» կը նկատուին ամէն ա-  
նոնք , որոնք միանուագ առ նուագն (500) հինգ հարիւր  
Ղ. Ո. ի նուիրատուութիւն մը կ'ընեն միութեանս , գրամա-  
կան , կամ գոյք :

Ժ Ո Ղ Ո Վ Ն Ե Ր

ՅՕԳ. 5.— Միութիւնս ունի երկու գլխաւոր վարիչ մար-  
մին . «Ընդհանուր» և «Գործադիր» Ժողովներ անուամբ :  
Ասոնցմէ դուրս են , բացառիկ պարագաներու մէջ կազմուած  
«Օժտանդակ» մարմինները , որոնք աւժամեայ են միշտ :

Ը Ն Գ Հ Ա Ն Ո Ի Ր Ժ Ո Ղ Ո Վ

ՅՕԳ. 6.— Ընդհանուր Ժողովը կը կազմուի բոլոր ան-  
դամներու մասնակցութեամբ և որ կը զբաղի .

ա) Գործադիր Ժողովոյ իրաւասութենէն վեր խնդրոց  
լուծմամբ :

բ) Գործադիր Ժողովոյ հաշիւներու տարեկան քննու-  
թեամբ :

գ) Սոյն կանոնագրի մասնակի փոփոխմամբ , առանց  
հիմնական սգւոյն դպչելու :

դ) Միութեան լուծման խնդրով :

ՅՕԳ. 7.— Ընդհանուր Ժողովը կը գումարուի տարին  
չորս անգամ , իւրաքանչիւր հռամսէի սկիզբը , լսելու համար  
Գործադիր Ժողովոյ հռամսեայ գործունէութեան համարա-  
ւութիւնը :

ՅՈՒ. 8.— Բացի սոյն օրինական պայմանաժամէն, Ընդհանուր ժողովը բացառիկ նիստի կը հրաւիրուի:

ա) Երբ Գործադիր ժողովը անմիջական պէտքը զգայ յօգուտ Միութեան կատարելի կարեւոր գործի մը, որ իր իրաւասութենէն վեր է, և որ կարելի չէ սպասցնել մինչեւ օրինական գումարման պայմանաժամը:

բ) Երբ առնուազն տասը անգամ հաւաքաբար անոր անմիջական գումարումը պահանջեն, մասնաւոր գրով գիմելով գիւանին, եթէ օրինական գումարման պայմանաժամին երեսուն օրէ աւելի միջոց մը կայ:

ՅՈՒ. 9.— Ընդհ. ժողովը ունի գիւան մը, բաղկացած՝ ատենապետէ մը, ատենադպրէ մը և խորհրդականէ մը:

ՅՈՒ. 10.— Ընդհ. ժողովոյ որոշումները վաւերական ըլլալու համար անհրաժեշտ է բոլոր անդամոց կէսէն մէկ աւելին ներկայութիւնը, սակայն առաջին նիստին մեծամասնութիւն չգոյանալուն, երկրորդ նիստին որոշումները կը նկատուին վաւերական և անդառնալի, երբ բոլոր անդամոց մէկ քառորդը ներկայ է:

### Գ Ո Ր Ծ Ա Դ Ի Ր Ժ Ո Ղ Ո Վ

ՅՈՒ. 11.— Գործ. ժողովը Միութեանս ընթացիկ գործերը վարելու կոչուած ժողովն է, որ կ'ընտրուի Ընդհ. ժողովին կողմէն գաղտնի քուէարկութեամբ մէկ տարուան համար և վերընտրելի է: Սակայն բացառաբար Միութեան հիմնարկութեան տարւոյն անգրանիկ Գործ. ժողովը 2 տարուան շրջանի համար պիտի ընտրուի:

ՅՈՒ. 12.— Գործ. ժողովը պարտի.

ա) Հսկել սոյն կանոնադրին անթերի գործադրմանը:

բ) Ջանադիր ըլլալ Միութեանս առաջագրած նպատակներուն հետզհետէ գործադրման, և միշտ աւելի բարձր պահել Միութեանս վարկն ու կեանքը:

գ) Կազմակերպել ժողովրդային հրապարակախօսութիւններ, դատախօսութիւններ, ներկայացուցիչներ, վիճակահանութիւններ, ևն.:

դ) Փանձել անդամավճարները և Ջանադիր ըլլալ Միութեանս հասոյթի ազբլւրներուն առաւելացման:

ՅՈՒ. 13.— Գործ. ժողովը ունի զիւան մը եօթը անդամէ բաղկացած, տաննապետ, տաննադպիր, գանձապետ, միտերապահ և խորհրդականներ:

ՅՈՒ. 14.— Գործ. ժողովը իր տաննագրութիւնները և հաշուական գործառնութիւնները պաշտօնական տոժարներու մէջ կ'արձանագրէ և տարին մէկ անգամ իր համարատուութիւնը կ'ընէ Ընդհ. ժողովի առաջ, առ ի քննութիւն և վաւերացում:

ՅՈՒ. 15.— Գործ. ժողովը ինք կ'ընարէ իր զիւանը, իր ժողովներուն առնուազն չորս անգամ ներկայ գտնուելու են որչառմ մը կարենալ քուէարկելու համար:

Գործ. ժողովոյ այն անգամը որ երեք անգամ շարունակ առանց բանաւոր պատճառի կը բացակայի ժողովներէն հրատարեալ կը նկատուի:

ՅՈՒ. 16.— Փանձապետ, միտերապահ, ևն. բոլոր զիւանի անդամներն ալ անձնապէս պատասխանատու են իրենց յանձնուած գոյքին և դրամին:

ՅՈՒ. 17.— Գործ. ժողովոյ գանձապետը չի կրնար իր քով տասներհինգ օսկիէ աւելի գումար մը աւանդ ունենալ, աւելի գումարի մը գոյութեան պարագային, պարտի զայն յանուն Միութեան՝ կանխորոշ պանքա մը ի պահ դնել, տաննապետին հետ համագործակցելով:

ՅՕԴ. 18. — Յանուն Միութեան եղած գանձումները կ'ըլլան ասինապետին և գանձապետին ստորագրութիւնները կրող և պաշտօնական կնիքով կնքուած ու թուագրեալ վաւերական ընկալագրերու փոխարէն, նոյնպէս և գնումները ու վճարումները կ'ըլլան ստացողին կամ վաճառողին ստորագրութիւնը կրող փաստաթուղթերու փոխարէն, որոնք կը յանձնուին հաշուակալին՝ ի պահ դրուելու համար:

ՅՕԴ. 19. — Միութեանս այն ընթացիկ գործերը, որոնց ծախքը տասնընինգ սկեւոյ գումարը չանցնիր, Գործ. Ժողովը արտօնեալ է կատարել, բայց աւելի ծախք պահանջող գործերու որոշումը Ընդհ. Ժողովին կը վերաբերի:

ՅՕԴ. 20. — Գործ. Ժողովը, Լսարան-Ընթերցարանի բացումէն յետոյ, իր ունեցած գրամին հարիւրին ութսունը միայն արտօնեալ է ծախսել, մնացորդ հարիւրին քսանը իրր Միութեան գրամագլուխը պէտք է պահուի, բացի այն պարագայէն, երբ Ընդհ. Ժողովը ամբողջական գրամագլուխին առժամարար գործածումը քուէարկէ ու և է ձեռնարկի կատարման համար, այս պարագային սակայն, Գործ. Ժողովը գործածուած գրամագլուխը իրր փոխառութիւն նկատելով, առաջին հասոյթի պատահումին ամէնէն առաջ այդ գումարը անջատել և պահել պարտի:

ՅՕԴ. 21. — Երբ Գործ. Ժողովը իր պահեստի գրամին գործածութեանը համար ու և է առաջարկ բերէ, որուն նպատակը ըլլայ բացարձակապէս ի շահ Միութեան, Ընդհ. Ժողովը կրնայ արտօնել այդ գրամին յատկացումը, իր անդամներուն երկու երրորդին մեծամասնութեամբ:

ՅՕԴ. 22. — Միութեան այն անդամը, որ Միութեան նպատակը, ձեռնարկները և վարկը նուազեցնել կը ջանայ, կամ ըմբոստութիւն կը յայտնէ արուած օրինական որոշմանց, արգելքներ կը յարուցանէ անոնց գործադրմանը և

կամ երկու ամիս շարունակ չի վճարեր իր անդամավճարը առանց արդարացուցիչ պատճառի, Գործ, ժողովը նախ երկիցս կ'ազգարարէ նամակով, երրորդին կը հրաժարեցնէ զայն, լսելէ յետոյ իր արդարացումները, զորս ենթական պարտի ընել ներկայանալով նոյն ժողովի առաջ, հրաժարեցումի գրին ստացուածն եօթը օր յետոյ առ առաւելն:

ՅՕԻ. 23.— Ոչ մէկ անգամ, պարզ կամ ժողովական, չի կրնար ինքն իր գլխուն որոշումներ ընել և գործադրել անոնք, նոյն իսկ եթէ անոնք իրաւամբ օգտակար ըլլան Միութեան համար: Բացարձակապէս արգիլուած է բոլոր անդամոց ճնշում բանեցնել ժողովոց վրայ, կամ միջնորդութիւն կատարել անոնց մօտ յանուն բարեկամութեան: Այն անգամը որ ունի ու է դիտողութիւն, կամ նամակով կը դիմէ Գործադիր ժողովի, և կամ օգտուելով կանոնագրին Տրդ. յօդուածի արամագրութենէն, կը դիմէ Ընդհ. ժողովի:

### Հ Ա Ս Ո Յ Թ Ի Մ Ի Զ Ո Յ Ն Ե Ր

ՅՕԻ. 24.— Միութեանս հասոյթի ազդիւրները կը կազմեն.

ա) Անդամավճարներ:

բ) Նուիրատուութիւններ (գրամ, գոյք, կտակ):

գ) Հանդէսներ, ներկայացումներ, վիճակահանութիւններ, ևն.:



Լ Ո Ւ Ծ Ո Ւ Մ

ՅՈՒ. 25.— Միութիւնս կը լուծուի Ընդհ. Ժողովի միաձայն հաւանութեամբը, և կամ ինքնին լուծուած կը համարուի, երբ իր անդամոց թիւը տասնըհինգէն նուազ ըլլայ:

Այս պարագաներուն, իր բոլոր գրամն ու գոյքը կը յանձնուին Գահիրէի Հայոց Ազգ. Առաջնորդարանին, հակառակ պարագային, Ազգ. Առաջնորդարանը իրաւունք ունի նոյնը գործադրելու:

( Կ Ն Ի Ք )

Զակագիկ, 1 Մարտ, 1917



ԹՅԻԱՀՍՄԱՐ 239

Վ.Ա.Ի.ԵՐԱՅԵԱԼ, Գ.Ա.Ի.Ա.Ռ., Վ.ԱՐՉՈՒԹԵԱՆ ՔԱՂ. ԺՈՂՈՎՈՅ  
1917 ՄԱՐՏ 5 (Ն. Տ.) ԽԸ. ՆԻՍՏԻՆ ՄԷՋ:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՆԱՅՈՑ Յ'ԵԳԻՄՏՈՍ  
( Կ Ն Ի Ք )

